

ՆԵՐՍԵՍ ՊԱԼԻՆՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ (XIV Դ.)

Սույն ժամանակագրական հատվածները գտնվում են Մարտիրոս Լեհացու ժամանակագրության հայերեն թարգմանության բնագրի տարբերմասերում (տե՛ս Մատենադարանի հետևյալ ձեռագրերը՝ № 2037, էջ 1ա, 1421 թ., 2038, էջ 2ա, 1654 թ., 7841, էջ 1ա, XVII դ. 60-ական թթ., 3079, էջ 1ա, մինչև 1693 թիվը և հետո, 4347, էջ 1ա, 1701 թ.)¹։ XIV դարի հայ ունիթորների նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ներսես Պալինցը, 1347—62 թվերին², Ավինիոնում, Մարտիրոս Լեհացու Հռոմի կայսրների և պապերի ժամանակագրությունը լատիներենից հայերեն թարգմանելիս, ժամանակով իրեն մոտ, կամ ժամանակակից մի շարք տեղեկություններ մտցրել է թարգմանության բնագրի մեջ³ և այդ մասին գրել նաև հիշատակարանում. «...գրաբմանեալս յուման տեղիս ի մի եղեալ և կարգաւորեալ սրբաքերելով⁴ գրել սկսանիմ ըստ կարգի. նաև ի մտի եգեալ եմ, զի որքան և կարացից և գտից զպատմութիւնս Հայկազեանց և հայրապետացն և զթագաւորացն Հայոց գրել իսկ եթէ ի շարս գրոցն և եթէ ի վերջսն, որպէս և դիպեսցի թէ կարացից գտանել»⁵։

Եվ իսկապես, Մ. Լեհացու ժամանակագրության հայ թարգմանության բնագրում գտնում ենք ոչ միայն թարգմանչի կողմից կատարված մի շարք ավելացումներ, այլև թարգմանության վերջում, Մ. Լեհացու օրինակով կազմած, հայկական թագավորների և կաթողիկոսների, խիստ համառոտ ցանկեր⁶, որոնց մասին կխոսվի ներքևում։

Վերևում նշված ձեռագրերից ամենից հնագույնի՝ № 2037 ժողովածուի մեզ զբաղեցնող բնագրի մանրագնին ուսումնասիրությունից հետո, առանձնացրեցինք և հրատարակության համար հիմք ընդունեցինք այն բոլոր հատվածները, որոնք, մեր կարծիքով, պատկանում են Ներսես Պա-

¹ Երկու ձեռագրում գտնվում են այս ժամանակագրության միայն առանձին հատվածները՝ № 6554, էջ 51ա—63բ, 2248, էջ 223ա—226բ։

² Այս տեղեկությունը նա գրել է թարգմանության բնագրի մեջ (տե՛ս ներքևում, էջ 179), թեև մեջբերված հիշատակարանում նա գրում է, որ թարգմանությունն սկսել է 1348 թ. (№ 3079, էջ 1ա)։

³ Հայազեաներն այս բանը շատ վաղուց էին նկատել (տե՛ս Մ. Զամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 346, Գ. Զարբհանալյան, Պատմութիւն հայ հին գաղութեան, Բ, Վենետիկ, 1878, էջ 161, Ալիշան, Հայապատում, Ա, էջ 122,

⁴ № 2038 տարբերակում «սրբաքերելով», էջ 1բ։

⁵ № 3079, էջ 1ա, տե՛ս նաև № 2038, էջ 1բ, 4347, էջ 1ա։ Գ. Զարբհանալյան, Պատմութիւն հայերէն գաղութեան, Բ, էջ 160—161։

⁶ № 2037, էջ 131ա, 134ա, հմտ. մյուս տարբերակները։

լիենցի հեղինակությանը, Այս ավելացումները վերաբերում են դերադան-
դապես Կիլիկիայի հայկական թագավորության պատմության առանձին
դեպքերին, հայկական մատենագրությանը և այլն: Միայն զարմանալի է,
որ Ալիշանը գրում է, թե Ն. Պալիենցը Մ. Լեհացու ժամանակագրության
թարգմանության բնագրում ավելացրել է «...ըստ տեղւոյն խառնելով ի
կողմանէ Հայոց կրօնական յիշատակներ»¹:

Ն. Պալիենցի այս տեղեկություններից բավական հետաքրքիր են 1292
թվի եգիպտական զորքերի կողմից Հռոմկլայի գրավման նկարագրության,
1290-ական թվականների Հեթումյան դինաստիայի գահակալական պալ-
քարի, ապա 1300 թվի (հեղինակը սխալմամբ նշում է 1302 թիվ), եգիպ-
տացիների դեմ, հայ-մոնղոլական զորքերի մղած կռիվների, 1321 թվի Այասի
գրավման տեղեկությունները և այլն: Վկայությունների մեջ թեև գտնում
ենք առանձին անճշտություններ, սակայն սխալված կլինենք, եթե դրանք
համարենք ընդհանրապես սխալ և շփոթ, ինչպես միտումնավոր կերպով
վարվում է Ա. Տեր-Միքելյանը²:

Ն. Պալիենցի հեղինակությանը պատկանող այս հատվածների իսկու-
թյան վրա հիմք չունենք կասկածելու, թեև մի քանի տեղեկություններ,
որոնք գրված են Մ. Լեհացուց հետո³, ասենք Աքքայի, Տրապուսի գրավման
և այլ տեղեկությունները, որևէ կերպ չկարողացանք համոզված ձևով վե-
րագրել Ն. Պալիենցին: Հնարավոր է, որ սրանք էլ նա է ավելացրել, բայց
ավելի հավանական է, որ մինչև Ն. Պալիենցի թարգմանությունը, մեկ ու-
րիշը շարունակել է Մ. Լեհացու ժամանակագրությունը: Այդ պատճառով էլ
վերոհիշյալ մի քանի տեղեկությունները թեև Ն. Պալիենցի անունով մյուս
հատվածների նման չհրատարակեցինք, բայց նրանցից հետաքրքիրները՝
դրեցինք համապատասխան ծանոթագրություններում⁴:

Հայագիտության մեջ ընդունված է Մ. Լեհացու ժամանակագրության
Ն. Պալիենցու թարգմանությունը դնել 1348 թվին⁵: Սակայն փաստերն այլ
բան են ասում: Ն. Պալիենցի մեղ արդեն հայտնի հիշատակարանում կա
այսպիսի մի ցուցում՝ «Արդ եղև թարգմանութիւն գրոցս ի բազում տեղիս
և ի գաւառս, յայլ և յայլ ժամանակս...»⁶: Նշանակում է, թարգմանությունը
տեղ է բավական երկար: Եվ իրոք, բնագրի այլ տեղեկությունները հաս-
տատում են այդ իրողությունը. օրինակ, [X դարի սովի և մահտարածամի
II. Լեհացու վկայությունը թարգմանելուց հետո, Ն. Պալիենցն ավելացնում
է. «Որպէս և է յամիս յայսմիկ, յորում գիրքս թարգմանեցաւ, յամի տեսուն
ՌՅԽԷ (1347)...»⁷, և ապա մի այլ տեղ ավելացնում, որ այդ մահտարածամը
«ընդ յամենայն կղզիս շրջեցաւ զերեք ամս»⁸: ուրեմն թարգմանության աշ-

¹ Հայագաւորում, Ա, էջ 122: Կրօնական հարցերի մասին Մ. Պալիենցն ունի
առանձին, մի քանի էջանոց աշխատություններ, օրինակ՝ Մօի և Ազանայի կրօնական ժո-
ղովների մասին և այլն (№ 2037, էջ 130—142ր, 147ա և շար.):

² Տե՛ս նրա հոգովածները «Արարած», 1803, էջ 412—418, 507—523, «Լուսալ», 1901,
Ա, էջ 290):

³ Մ. Լեհացին իր ժամանակագրությունը հասցնում է մինչև 1277 թիվը:

⁴ Տե՛ս վերևում, էջ 91, ծանոթ. 216, էջ 92, ծանոթ. 217:

⁵ Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հա. Գ, էջ 346, Գ. Ջաբրահանյան, Պատմու-
թիւն հայ հին դպրութեան, Բ, էջ 100, աես նաև վերևում, էջ 173, ծանոթ. 2:

⁶ № 3079, էջ 1ա:

⁷ Տե՛ս ներքևում, էջ 177:

խտտանքները, որը դեռ ավարտված չէր, հասել է մինչև 1350 թիվը, Պատարագի մեկնություն հայերեն թարգմանություն մասին խոսելիս, թարգմանիչն ավելացնում է, որ թարգմանությունը կատարել է Թագեոս Կաֆայեցին. իսկ ուրիշ տվյալներից մեզ հայտնի է, որ Թ. Կաֆայեցին այդ աշխատությունը թարգմանել է 1354 թվին¹, Վերջապետ, 1347 թվի սովի կապակցությամբ թարգմանիչը գրում է. «Եւ այս յիրաւի եղև, քանզի յամի տեառն ՌՅԿԱ (1361) եղև երկրորդ մահաարածամն ի յուլիս ամսոյ մինչև ի յունվարն»։ Այս բոլոր փաստերը հաստատում են, որ թարգմանությունն սկսվել է 1347 թվին և ընդմիջումներով ավարտվել 1362 թվին.

Ն. Պալիենցիայս հատվածներն առաջին անգամ չէ, որ հրատարակվում են։ Սրանցից մի քանիսը միայն, այն էլ կրճատումներով, Մ. Չամչյանը հրատարակել է «Պատմութիւն Հայոց»-ի Գ հատորի ծանոթագրություններում², իսկ Ալիշանը՝ միայն երկու ընդարձակ հատվածը³։

Ներկա հրատարակությունն ընդգրկում է Ն. Պալիենցին պատկանող բոլոր հատվածները, որոնք համեմատվել են մեր ձեռքի տակ գտնված մյուս տարբերակների հետ և կարևոր ուղղումները նշվել տողատակ, իսկ գրչագրական տարբերակները, օրինակ՝ «դրդող» թե «դրդող», «նուիրակ», թե «նւրակ», «գրգրող», թե «գոգոող», «լիկաթ», թե «լիկատ» և այլն, համար Մ. Ահաջու ժամանակագրության բնագրից երբեմն վերցրել ենք առանձին հատվածներ, և նշել կոոր փակագծերում, իսկ ձևագրի էջերը ֆեռսոված և մաշված լինելու պատճառով, բնագրի վերջին մասի բազմաթիվ բառերը, անկյունավոր փակագծերում, վերականգնել ենք № 7841 ձևագրի տարբերակի օգնությամբ։

¹ Տես ներքևում, էջ 180, ծանոթ. 3։

² Տես ներքևում, էջ 177։ Հնարավոր է, որ Ն. Պալիենցը այս վկայությունը ավելացրած լինի հետագայում, թարգմանության համապատասխան վկայությամբ։

³ Էջ 372—378, 383—384, 387—389։

⁴ «Հայապատում», Բ, էջ 521—524, 532—533։

V

ի փոքր Հայք, որ է Կիլիկիա մերձ առ դղեակն Հարունի 17 բ
կոչեալ, է ջուր ջերմիկի, յոյժ օգտակար ամենայն ցաւոց. բայց
որ ոք գնա անտ և մտէ ի ջուրն՝ յառաջին օրն կորուսանէ զոյս
աչացն և մնա կոյր զաւուրս երիս և ապա զկնի Գ (3) աւուրն
5 վերստին առնու զոյս աչացն և այսպէս բժշկի յամենայն ցաւէ:
Դարձեալ ի նոյն Կիլիկեա մերձ Անարզարոյ ի դեալ]դն ճոռակի
կոչեալ, անտ մերձ է ծովակ վոքք, յորում ծովակ էթէ ձի կամ
այլ անասուն մտէ ի ջուրն, նոյն ժամայն կըճղակն կորզեալ ան-
կանի, նաև ագին և բաշն ընդ ամենայն մազին կորդ[ի], բայց
10 եթէ ըմբէն ի ջրոյն այն անասունք ոչ մնասին¹:

— 0 —

[Արար ևս սա² զգիրքն մեկնութեան սրբո պատարագին գեր 57 բ
ի վերո մտաց և հրաշալի մեկնիչ և երկնահանգէտ միտս մեկնչի],
զոր մեկնութիւն պատարագի թարգմանեալ է ի հայկական գիր
սրբազան եպիսկոպոսն Կաֆային աէր Թագէոս³:

— 0 —

15 Ընդ այոմ իսկ ժամանակի⁴ խանն Թարթարացն, որ յարեալս 31 ա
ի Դաշվրէժ նստի, որ կոչէր Հուլայուն, և էառ զքաղաքն Պալ-
տաք⁵ ի Տաճկացն. և զի այն էր աթոռն խալիֆային, որ է վեր-
նագոյն առաջնորդն մահմուտականացն, զոր ըմբոնեալ խանն
այն Հուլայուն զխալիֆայն շուռն, ի բանդի չարաչար մահուամբ
20 սատակեաց. Նւ ապա հետեալար նոյն Հուլաու խանն էառ զԱլա-
մօթն⁶ դղեակ և կոտորեաց ի սպառ զհաշիշիքն, որք անդ էին
դարանեալ ընակելով: Նւ ապա իսկ զկնի այնմ յամն երրորդ էառ
բոնութեամբ զքաղաքն Հալապ ի Սիւրիա ի Տաճկացն: Գոյր և
ընդ նոյն խանին դրոզ և գոգոզ ի վերայ Տաճկացն ի ջնջումն,
25 թագաւորն Հայոց Հէթում և կաթօլիկոսն Կոստընդին, կարձեմ
Բարձրբերդացին է:

— 0 —

Այս Կլէմէնս⁷ ի սոյն ամի (1342) առաքեաց ի Հայս ի Կիլի- 75 բ
կեայ վասն միաշրանութեան և ուղղութեան հաւատո և խորհրդոց
եկեղեցո և վասն բերելո զազգն Հայոց ի հնազանդութիւն և ի մի-
30 ութիւն եկեղեցո, առաքեալ լիկատս և նւիրակս զերեւելի արսն
զԱնդոն եպիսկոպոսն Կայեթոյ, վարդապետ աստուածային տա-
ռիցն և զՋոհաննէս, ընտրեալն յեպիսկոպոսութիւն Գօրօնին, վար-

դասկետ սիվիլական և քաղաքական օրինացն և դէկրէթալացն*, որ էր արքեպիսկոպոս Բիդանին. որք զնացեալք առնել միաբանութիւն. և խոստացան Հայք առնել զամենայն, զոր կամիցի եկեղեցի: Բայց պապն ոչ կամեցաւ փող տալ առժամայն: Ի յօգնութիւն և ի փրկութիւն Հայոց, այլ խօստացաւ, զի յորժամ զարձցին ի միարանութիւն սուրբ եկեղեցոյ, յայն ժամն յամենայն ամի տալ ժԲԻ (12000) Ֆլօրի և Ի (1000) հոգի ձիաւոր, վասն օղնութեան Հայոց:

— 0 —

Յամի տեառն ՌՅԽԷ (1347) և պապութեան սորա⁸ յամին 70 ա
 10 Է (7), խրատն հասարակաց մարդկան և ցասուցն սաստիք յԱստուծոյ հասանէր ընդ յամենայն յաշխարհս մահն յանկարծահաս, որ սկսեալ եղև յարևելից՝ ի Հնդկաց և եկն կարգաւ մինչև յարևմուտս, ի ծագաց երկրի մինչև ի ծագս, ընդ յամենայն կղզիս շրջեցաւ զերեք ամս⁹. և կարծի ևս յոմանց, եթէ դեռևս կայ ցասուցն այն յաշխարհի: Այլ ևս երկիւղալից, զի ասի յոմանց և կասկածի, եթէ դարձեալ գայցէ ընդ յերկիր յօրինակ այդէկթողին** դառնալ ճոպքադութեամբ ի վերա: Եւ այս յիրաւի եղև, քանզի յամի տեառն ՌՅԿԱ (1361) եղև երկրորդ մահտարածանք ի յուլիս ամսոյ մինչև ի յունվարն¹⁰: Արդ՝ մինչ այս լինէր և
 15 ամենեքեան յանկարծամահ*** մեռանէին միապէս ընդ յամենայն երկիր****, վասն զի առաջին ցաւն լինէր, զի սրին ձգէին ի բերանոյն և ի նոյն օրն մեռանէին: Եւ նախ մեռանէին սոյն ցաւովս աղքատքն և յետ Բ (2)-ց ամսոց***** կամ աւելի մեծամեծքն: Եւ երկրորդ ցաւն էր այտուցն և ելունդն. և ելանէր
 25 յաճուկն, զոր խիարակ կոչեն, կամ ելանէր յանթն և կամ ի սիրտն ընդ ներսէ և վաղվաղակի յԲ (2) օրն մեռանէր: Լինէր ևս զի ի խիարակէն, յորժամ կտրէին, զերծանէր ոք որ և բաղումք ապրեցան. բայց որք յանթն հանին ելունդ ոչ ապրեցան: Իսկ հարուածքն յոմանս տեղիս մնայր բաղում ամիսս, իսկ յոմանս տեղիս սակաւ: Սակայն յիշխանաց** և յազնուականաց, ի
 30 թագաւորաց և կամ ի տէրանց յաշխարհաց ոչ ոք մեռաւ: Լինէր և այս ի տեառնէ Աստուծոյ շնորհ, զի եթէ սաստեաց ոչ ի սպառ կորոյո, քանզի թէպէտ մեռանէին յանկարծ, այլ հոգով ոչ կորընչէին, զի ամենեքեան իբր իմանային զցաւս յանձինս առ-
 35 ժամայն զղջմամբ խօստովանէին և մեծ մասն զհաղորդութիւն սուրբ մարմնոյն Բրիստոսի ընդունէին և այնպէս ամենեքեան փրկեալ հոգով ելանէին***** յաշխարհէ: Որ և պապս Կլէմէնս, որ յիրաւի գթած, թէպէտ և ոչ յընթանուր յաշխարհի, սակայն

* Որոշ րնագրերում այս բառը բացակայում է (Ք 3079, էջ 223ա):

** Ք 3079, էջ 222ա, Այգէրդիւն:

*** Ա. 3070, էջ 222ա, յանկարծակեանս:

**** Միապէս ընդ յամենայն երկիր չէք Ք 3079 տարբերակում:

***** Ք 3079 տարբերակ, էջ 222ա ամա:

***** Նույն տարբերակում ի տեւանց ի խանաց:

***** Նույն տարբերակում զնայիւն:

- մասնաւորաբար նախ ի տեղին ուր ինքն էրն բնակութեամբ և
 յամենայն գաւառս և ի քաղաքս ե ի թէմս, որք մի անգամ
 հայցեցինն ամենեցուն յանկարծամաս* մեռելոցն, որք զղջմամբ
 արձակումն հայցէին, Զլիակատարն թողութիւն մեղացն և տան-
 5 ջանացն ընդ արձակեալ շնորհեաց, որո շնորհիւ թողութեանն
 ամենայն հոգիքն ազատեցան անընդմիջաբար և յարքաութիւնն
 երկնից գնացին: Որ և ի հաստատութիւն ե ի ստուգութիւն այս-
 միկ փրկագործութեան ընդամ յա[յ]տնութիւնք և տեսիլք երեւե-
 ցան կենդանեացն և պատմեցին և ստուգեցին այնպէս գոլ, զի
 10 ամենայն հոգիքն փրկէին, որք թողութեան տեսուն պապին ար-
 ժանացան և ամենեքեան առժամայն առանց պատիժ յարքա-
 յութիւնն երկնից հասանէին: Այլ թէ որպէս կենդանիքն վա-
 րէին առ հիւանդացեալսն և որպէս առ մեռեալսն ասասցուք: Եւ
 այս ընդ** յամենայն տեղիս, քանզի ոչ ի տալ հաղորդութեանն
 15 և ոչ թաղմանն ևս զանկակ հարկանէին և այս յիրաւի, զի մի
 հիւանդքն ահարեկ լինէին: Եւ ապա զկնի սակաւ աւուրց լինէր,
 զի ոչ պաշտելով և ոչ կղերիկոոք տանլին զգիսն, այլ աշխար-
 հականքն և զքաղաքականսն և զփարթամսն ԺԵ (15) ի շարն,
 մի խաչիւ առաջի և մի քահանա կամ ոչ բնաւ տանէին ի թա-
 20 ղումն, Իսկ զաղքատսն զԽ (40)-նն և աւելի ևս ի մի վիհ դնէին
 և զհողն ի վերայ ածէին: Եւ սոյնպէս մեռան մարդ և անասունք
 ևս: Եւ բազում շէնք, աւանք և դղեակք ամբնակք մնացին և
 դաշտք, մարգուռք, անդք ե այգիք խոպան և ամայի եղեն.....
 Ընդ սորին տեսուն Կլէմէնթոսիս քահանայետութեամբն Գ 76 Բ
 25 (3) ամին եղև սպանեալ սրով յիւրայնոցն թաղաւորն Հայոց
 Կիտոն¹¹ և եղբայրն նորա*** Պէմունգ գունդն Կօռիկոսո:

— 0 —

- Արդ¹² զայս ես ինձէն տեսայ՝ գրող գրոցս, ներսէսս, զի ի 84 Բ
 30 գուրգո չոռմ ի յողորմութիւն պապոյն, Բայնիօթն կոչեալ կին
 մի սովեալ իբր յագեցաւ կերակրով, զի սովեալ էր***, առժա-
 մայն մեռաւ ի յամին տեսուն ՌԴՃԽԶ (1346) ի մարտոյ ԻԳ (23)
 օրն:

— 0 —

- Ընդ այնմ ժամանակի, ի Փոքր Հայք, սրբագոյն հովիւն Հա- 90 =
 35 յոց՝ աէր Ներսէս, թոռն երանելոյն Գրիգորի Հոսաւորչին, վասն
 քարոզութեան օրինացն Աստուծոյ յեկեղեցւոյ իւր, ի Պապ թա-
 զաւորէ Հայոց, դեղ մահու խառնեալ ի բաժակն տեսուն, զոր
 սուրբն արբեալ հանգեաւ¹³:

— 0 —

* Ք 3079 տաբերակում յանկարծախառնս:

** Նույն տեղում, ընդ չիք:

*** Սղբայն Ընդ չիք Ք 3079:

**** զի սովեալ էր, չիք Նույն տեղում:

Սոյն Թէոդոսս ի Մեծ Հայք, յարեւելս, ի Կարին գաւառն 100 ւ
շինեաց զմայրաքաղաքն մեծ զԱրղրուամն և կոչեաց յանուն իւր
Փոքր Թէօդօպօլիս, յամի ծննդեանն տեառն ՆԽ (440):

— 0 —

Արդ՝ իրր զսոյն գիրքս¹⁴ ես Ներսէս Պալիանէնց թարգմա- 112 ւ
5 նէի ի քուրդս Հոռմայ և զայս իսկ հիացական իրս գրէի, պատ-
մեցաւ յումեմնէ իմաստնոյ և յարհիեպիսկոպոսէ և յայլոց պա-
տուաւորաց արանց, զի յաւուրս մեր և մերձ առ մեօք պատա-
հեցաւ, զի մինչ նաւորդք գնային ընդ ծովն, և գոլօլ ի մէջ ծօ-
վուն, յաւուր միում խոռովեալ ծօփս յուզէր և երկինքն մթնաց-
10 եալ մրդկէր, զոր տեսեալ նաւորդքն ծանեան ստուգապէս եթէ ի
շամաս ի հարուածք կարկտի լինին: Եւ մինչ զայս քննէին եկն
յերկնից քար մի, չափ հաւանո միոջ, իբր նուկիս Մ (50) կամ
աւելի և երկոքին ծայրքն սուր և զարկեալ ի վերայ նաւին կոտ-
րեալ ծակեաց զվեր առաստաղ նաւին*, և էանց ի ներս և մնաց
15 անդ: Բա[յ] էր քարն այն սպիտակ, որպէս պաղ, որ և զամե-
նայն տեսութիւն պաղի ունէր, այլ կարծր և պինդ այնչափ
մինչդի ասեն, որք տեսինն, եթէ ամենևին ոչ եղև գտեալ պօղօ-
վատ այնպէս ամրադոյն:

— 0 —

[Ի սորին Գառլոսիս աւուրսն սօվ սաստիկ ընդ յամենայն 113 ւ
20 Իոալիայ լինէր], որպէս և է յամիս յայսմիկ, յորում գիրքս թարգ-
մանեցաւ, յամի տեառն ՌՅԽէ (1347), է սօվ սաստիկ տարածեալ
ի վերայ երկրի¹⁵ և ոչ թէ միայն ի Վինուենս¹⁶ իսկ, այլ յամենայն
կողմանս Ֆոանկաց:

— 0 —

[Ընդ սորին¹⁷ ևս Հեռիգոսի Երրորդի Ռօպէնցիք, որք էին 117 ւ
25 յազգէ և յարմատոյ թագաւորացն Հայոց, մտին ի Կիլիկիայ և
առին զքերդն Վահկայն, որ էրն Կոստանդին, որդի Ռօրէնին, ազ-
գական Գագիկ թագաւորին և աստից ի հետ սկսան Հայերն տի-
րել Կիլիկոյ, որ եղև այս ի թւին Հայոց ԵՃ և ԽԶ (1097), իսկ Քրիս-
տոսի թւին ՌՃԷ (1107)¹⁸:

— 0 —

30 [Եւ ապայ յետ Գ (3) ամի¹⁹ առաւ Աքա և զկնի մի՝ Տրա- 118 ւ
պօլիս. և զկնի հետեալար ամենայն երկիրն սուրը, որպէս ցու-
ցանի լիայպէս ի գիրքն բասաճին], այլ ևս և գտանես զայս ի
գաւազան[ագիր]քն** պարոն Հէթմո տեառն Կօռիկոսոյ, զոր գրեմք
ի յետո գրոցս²⁰:

— 0 —

* Որոշ տարբերակում կոստանդ Ժակեաց գվեր առաստաղ ԳաւիԳ չիւ:

** Միւս տարբերակներում գաւազանագիրք:

Ընդ այսմ իսկ ժամանակի թագաւորն, որ է կայսրն Յունաց ¹¹⁹ Գործիւրօժէնն եկեալ զօրօք ի Կիլիկեայ էառ զնայ ի Հայերոյն բոնի, և զպարոն Լևոն, որ տիրէր երկրին, Բ (2) որդօքն կախալ տարաւ ի Կոստանդնուպօլիս և եգ ի բանդի: Եւ յայս լինէր ի 5 թւի Հայոց ՇՁԶ և Գրիստոսի թւին ՌՃԼԷ (1137)²¹: Արդ՝ Հայոց պարոնն Լևոն անդ ի բանդին մեռանէր, իսկ որդին նորս՝ Թորոսն ազատեալ ի բանդէն զկնի է (7) ամաց դարձեալ ի Կիլիկեայ եկեալ և զՂահկային բերդն դարձեալ առեալ աւազակութեամբ. և անդի ի դաշտն, զԱնարզարոյ բերդն առեալ: Դարձեալ 10 տիրեաց Կիլիկոյ և նորոգեցաւ տէրութիւնն Հայոց ի Կիլիկեայ:

— o —

...Արքեպիսկոպոսն Մասէնցիոյ, որ Մակունդինն է կարծեմ, ¹²² Կամօք եկեղեցոյն Հոռմայ և Կրամանաւ վերոյ ասացեալ կայսերս եկեալ ի Կիլիկեայ ի քաղաքն Տարսոն, յեկեղեցի սրբոյն Սօֆիայ, թողեալ շքեղապէս և օրհնեալ օծեաց ի թագաւոր Հայոց զպարոն Լեոն, որ էր պարոն Հայոց և տէր Կիլիկոյ, լեալ նախ ամս Ժ (10) և թագեալ կոչեցաւ Լէօ յամի տեառն ՌՃՂԹ (1199)²²: Որ և տաւ նմա ի կայսերէն ունել նշան և նշանակ ըստ անուանն իւր առիւծ, զոր տանին ևս, և սովորին թագաւորքն Հայոց մինչև ցայսօր, զի նախնի թագաւորքն Հայոց՝ յարևելս արժուայնշանն էին, որպէս և պատմութիւնքն Հայոց ցուցանէ: Այս Լևոն թագաւոր Հայոց, ի Զ (6) ամն իւրոյ թագաւորութեանն, էսո բռնի զքաղաքն Անդիոք մեծն մինչև ի տունն Դամբլուն, որ էր մեծ բաժինն քաղաքին և կալաւ Գ (3) օր, և ապա թողեալ դարձաւ²³: Իսկ Թ (9) ամի թագաւորութեանն իւրո սոյն Լևոնս էանց 25 ի կղզին Կիպրոս և էառ իւր ի կնութիւն զքոյրն թագաւորին Կիպրոսի և Երուսաղէմայ ոէ Ուկին զՄիպիլն²⁴: Այլ և ԻԱ (21) ամի իւրոյ թագաւորութեանն սոյն Լևոնս էառ դաւօվ ի գիշերի զնոյն Անդիոք մեծն և կացոյց անդ բրինձ զՌօբէն զթոռն եղբօրն իւրոյ²⁵:

— o —

Ընդ այսմ իսկ ժամանակի՝ ՌՄՁԲ (1282), հայ թւին ՁԼԱ, պարոն ոմն ի Թաթարացն, անուն Մանկօ Դամբլուր, իջեալ զօրօք ի Շամբն, որ է Ասուրիայ. և ճակատեալ ընդ սուլտանին Մսրայ՝ ընդ Ալֆին, մերձ դրանն Հէմսոյ քաղաքին և յաղթեաց Թաթարն, որ և ասի, թէ վարեաց զսուլտանն ի փախուստ զաւուրս Ը (8)՝, 35 Եւ կոտորեաց ի նոցանէ Թաթարն աւելի քան զԾՌ (50,000) այլս: Եւ տպայ զօրք սուլտանին պնդեալք դարձան յետս և շըրջեցին զզօրս Թաթարին, զի դարձան ի փախուստ, որ և յայնմ փախստին սպանան ի Մուղալ զօրուն իբր ԼԻ (30000), իսկ ի զօրացն քրիստոնեայ, այսինքն է թագաւորին Հայոց, որք էին ընդ 40 Թաթարսն համազոյգ, սպանան ի նոցանէ արս ԲԻ (2000)²⁶:

* 3079, Լ (30) օր:

Ընդ այսմ իսկ ժամանակս՝ յամս տեառն ՌՄՂԲ (1292) և ի 128 -
 թվին] Հայոց Ջեմ (1292) ասացեալ սուլտանն Եգիպտոսի Աշ-
 դաֆն զինի առմանն և աւերմանն Աքայոյ և զինի իբր ջնջեաց
 ամենևին զքրիստոնէիցն իշխանութիւն և զանունն ևս ի սուրբ
 5 երկրէն և ի Սէհլէն։ Ապայ այնուհետեւ յարձակէր վիշապն այն
 չար ի վերայ ազգին Հայոց. և ելեալ զօրօք գայր ի Միջագետս
 մերձ ի սինօն Ուռնայոյ քաղաքին և եկեալ պաշարէր զհայրա-
 պետական դղեակն Հայոց, որ կոչէր կլայ Հոռոմական, ուր էր
 կաթողիկոսանիստ Հայոց լեալ ի բազում ժամանակաց։ Եւ պա-
 10 շարեալ զայն սուլտանին խիստ և պնդայգոյն կովով, իբր այլ ոչ
 կարէին պահել քրիստոնայքն, քանզի յղեալ էր անդ թագաւորն
 Հայոց զքեռին իւր զպարոն Ռէմունդն բազում ընտիր մար-
 դօվք, զոր Տաճկնին ոչ կարացել էին առնուլ զբազում ամս կըռ-
 վով, այլ բարանօքն փուլցին զամենայն պարիսպն և նաղմեցին
 15 և եկին ի մէջ բերդին ծակն* և յատակէ շրջել ուղէին։ Իսկ իբրեւ
 տեսին, որք ի ներս էին, եթէ ի վաղիւն կամին դնել զհուրն և
 շրջել զբերդն, ուղեցին ամանաթ, այսինքն է վստահութիւն, գնալ
 յոտս նոցա։ Սակայն սուլտանն ոչ ընկալաւ զհայցուածս նոցա,
 վասն զի նախ ինքն բազում անգամ ասացեալ էր, եթէ ճճուք
 20 զբերդս և ես թողում զձեզ զամենեանեան ընչիւք գնալ։ Իբր այլ
 ինչ ոչ ճար գտանէին և ի վաղիւն կաթօղիկոսն Հայոց տէր Ստե- 126 ր
 փանոս, մականունն Հոռոմեցի, որ էր ի բերդն, սգեցաւ զսգեսան իւր
 հայրապետական, նոյնպէս և ամենայն եպիսկոպոսունքն և երի-
 ցունք ընդ նմա և խաչիւքն և ամենայն կահիւ սրբութեանն
 25 զնացին յոտս սուլտանին, զոր իբր ետես չար բռնաւորն այն
 եթուք, ասեն, ի վերայ կաթօղիկոսին, ասելով, թէ ճայգ յառաջի
 օրն ընդէ՞ր ոչ արարեր։ Բայց այնչափ արար վասն այնմ գնա-
 լոյն, զի հրաման եհան զոչ ոք սպանանել։ Արդ՝ սոյն կերպիւս
 էառ նոյն սուլտանն յայնմ աւուր զՀոռոմկլայն²¹ և զկաթօղիկոսն
 30 և զամենայն բազմութիւն քրիստոնէիցն աւելի քան 11 (30000)
 ոգիս գերիս տարան ի Մար ի բանդ և ի ծառայութիւն։ Այլ իբրեւ
 տարաւ զայն ամենայն ի Բաբելոն գոռոզն այն երկրորդ Բաղ-
 դասարն։ Ահա յաջն հայրական գրէր ընդդէմ նորա ևս, զի անկաւ
 մա՛ ի նոցա և մեռանէին ամենեքեան, զոր զգուշացուցին նմա
 35 առաջնորդքն իւր և գիտնականքն, եթէ վասն քրիստոնէից առաջ-
 նորդին գերութեանն լինին այս հարուածք։ Եւ կոչեալ սուլտանին
 զկաթօղիկոսն ասաց. «Ընտրեայ քեզ զոր կամիս արս Ի (20) և
 աւ քեզ զմեծ և զփառաւոր սրբութիւնն քո, զոր ունէիր ի ձե-
 ոինդ, մինչ իջեր ի բերդէն քո և գնայ վաղվաղակի յերկրէս իմոյ,
 40 քանզի հաւատամ, եթէ անցցէ մահս յերկրէս իմմէ։ Եւ կաթօ-
 ղիկոսն էառ զաջն սուրբ Գրիգորոյ և ետ սուլտանն արս ընդ
 նոսա և ծախս. զի բերին զնոսա ի Հայս²²։ Նաեւ եղև իսկ, զի ընդ
 ելանելն կաթօղիկոսին և աջոյն սրբոյ դադարեաց մահն ի նմին
 աւուր։

* Ք 3079 տարբերակումը քնդ ձակն։

Բայց նախքան դայս մինչ սուլտանն ի վերայ Հռոմկլային էր, զրերգ մի, Հայոց Թագաւորին, Ապրիլէս²⁰ անուն ետուն ի Տաճկին տուր տալով, Եւ Թագաւորն Հայոց ետ կամաւ զանա-
ոիկ դղեակն Բէհէսն սուլտանին ի գինս, որպէսդի զկաթողիկոսն
5 Թողուցու²⁰, Եւ կաթողիկոսն Թողեալ էր, որպէս վերոյ ասի և ոչ
գիտէին: Իսկ իրրե եկն ի Հայք նոյն կաթողիկոսն, վասն զի աշ-
խատեալ էր և խոցեալ յոգի, յետ սակաւուց յամն այն մեռանէր:
Եւ եղին իւրեանց կաթողիկոս զտէր Գրիգոր Տուրքերիցանց, յորմէ
րազում ուղղափառութիւնք սկսեալ եղեն ի Հայերն²¹:

10 Արդ՝ յամին այն, որում առին Տաճկին զՀռոմկլայն և
գերեցին զկաթողիկոսն Հայ[ոց], նախքան զառնուլն, այսինքն
յամի տեառն ՌՄՂԲ (1292) եղեն մոլորեալ ի Զատիկէն Ասորիքն,
Նեստորք եւ Հայք, զի չուզէին ի Նեստորացն յետ մնալ: Այլ ե
Թագաւորն Հայոց արար նախ ժողով և եղիտ զնոսա մոլորեալս
15 և սաստիւ հրամայեաց նոցա ոչ առնել Զասիկ ծուռ, բայց ոչ
կամեցան մնալ ընդ քրիստոնայքն, այլ յօժարեցան դասիլ ի
Նեստորիտքն հայր իւրեանց զնոսա կոչելով, ասելով. «Զինչ իմ
հայրն է արել և ես»:

Արդ՝ որովհետեւ ձգեցաւ պատմութիւնս առ ազգն Հայոց,
20 ասասցուք և սակաւ ինչ, զոր ի նոցանէն և առ նոքօք գործեցան:

Արդ՝ զկնի մոլորութեանն նոցաի Զատիկէն յամին հետագայ,
Թագաւորն նոցա Հէթում, որ ոչ էր երբեք լծեալ ընդ կին, այլ Թա-
գաւոր էր զկնի մահու հօրն իւր Լևոնի Բ-ին զամս Ե (5)²² և ու-
նէր ևս կենդանի եղբարս Է (7) և քոյրս Գ (3)²³: Սոյն Թագա-
25ւորս զասացեալ իւր Թագաւորութիւնն, զի ոչ երբեք էառ Թագ
արքայական, զտէրութիւնն տայր յեղբայրն իւր Թօրոս²⁴, որ էր
ծնընդեամբ երկրորդ զկնի իւր, որ և այս Թօրոս առեալ էր ի
կնութիւն զքոյր Թագաւորին Կիպրոսի Ե (5) ամաւ յառաջ²⁵: Զոր
Թագաւորն Հէթում տայր ի նոյն Թօրոսն զպարոնութիւնն և ինքն
30 լինէր կարգաւոր ի կարգէ սրբոյն Ֆրանցիսկոսի և կոչէր եղբայր
Զոհաննէս²⁶, Եւ իբրեւ անցին սակաւ աւուրք ի նոյն ամին, նոյն
եղբայր Հէթում Յոհանեսն ամուսնացուցեալ զքոյրն իւր Զապ-
լուն, որ էր նախածին քան զամենայն Է (7) եղբարքն, ընդ եղ-
բայրն Կիպրոսի Թագաւորին՝ Ամառի, տէրն Սուրոյ²⁷: Եւ լինէր
35 զի իբր եկն Ամառին ի Հայք պսակիլ ընդ կինն իւր, որպէս և
Թօրոսն վերոյ ասացեալ գնացեալ էր ի Կիպրոս: Սոյն փեսայս
Թագաւորին Հայոց իբր գայր ինքն և այլք բազումք ի Հայք,
Հայ և Ֆռանկ եկեղեցիականք միջնորդեալ որ և դրդուեալ և
շարժեալ արարին: Զի նոյն Զոհաննէս Մնուրն²⁸ Թողոյր զկրօնա-
40ւորութիւնն || և դարձեալ առնոյր զիւր Թագաւորութիւնն ի նոյն 127 =
ամին²⁹:

Իսկ զկնի ամի միոյ սոյն Թագաւորս Հայոց Հէթում ամուս-
նացոյց զքոյրն իւր՝ Ռիթայ անուն ընդ Միխայէլ կայսերն Կոս-
տանդն[ու]պօլսի. և իբրեւ եկին Հռոմքն տանել նայ, յղեաց զԲ (2)
45 քոյրսն իւր, այս է զասացեալ Ռիթայն և զԹէֆանօն, զի զմինն
հարսնացուցեն կայսերն և զմիւսն ինքն կայսրն պատշաճապէս

ղողեցեցէ այլոյ թագաւորի, որպէս կամի. որ տարեալ ղՌԻԹայն հոռոմացուցին և անուանեցին Մարիայ և եղև կայսրուհի¹⁰,

Իսկ զկնի այսմ, իրր անցանէր ամ մի, դարձեալ Հէթուհն այն տայր ղթագաւորութիւնն յիւր եղբայրն ի Թորոսն ասացեալ
5 և ինքն դարձեալ կրօնաւորէր¹¹,

Նւ զկնի ամի միոյ մեռանէր կին Թորոսին:

Նւ Հէթուհ կրօնաւորն և Թորոսն տային ղթագաւորութիւնն յեղբայրն իւրեանց Սմպատն և ինքեանք գնացին ի Կոստանդ-
նուպօլիս¹², Իսկ Սմպատն առնու թագ և օրհնութիւն և թագա-
ւորեաց ամս Դ (3)¹³, Նւ կացեալք նոքա ի դուրս՝ իրր թէ ամ մի
10 դարձան և կամէին Թաթարով ձգել զՍմպատն և առնուլ զպա-
րօնութիւնն և նայ նախիմա եղեալ, կալաւ զնոսա և եդ ի բան-
դի: Նւ ղրգութեամբ չար իշխանաց հրամայաց սպանանել ղԲ (2)
եղբայրն իւր: Այլ որ գնաց սպանանել ղԹորոսն ետ լարիւ խեղ-
ղել զնայ, իսկ որ զնաց սպանանել զՀէթուհն, ղի ոչ էին ի մի
15 տեղի, ոչ եսպան, այլ կուրացոյց զաչսն¹⁴, Իբր այս լինէր, չոր-
րորդ եղբայրն Կոստանդինն յարեաւ ի վերայ և եկեալ ի Սիսոյ
քաղաքն դօրօք. մերձ քաղաքին կոռեցան հայերն ընդ իրարս ի
մարգն Սիսոյ, ուր բազումք եղբարք զեղբարք սպանին և աղ-
20 զականք զմիմեանս, վասն անճանաչողութեանն, ղի առաւօտ էր:
Նւ այսպէս Կոստանդինն առեալ զպարօնութիւնն Հայոց կալեալ
զՍմպատն և գտեալ զՀէթուհն կենդանի ողջացոյց զմի ակն և
ինքն թագաւորեաց ամիսս Թ (9)¹⁵, Յետ այսց ամենայնի դար-
ձեալ ի չարաց ի ոմանց, մանաւանդ եթէ յիւրմէ իսկ, գրգի նոյն
25 Հէթուհն կրօնաւոր և յառնէ ի վերայ Կոստանդին և ձգէ զնայ ի
թագաւորութենէն և դարձեալ ինքն լինի թագաւոր: Նւ զՍմպատն,
որ երբեմն թագաւորէր, ղի կալեալ էր զնայ Կոստանդինն, և
զնոյնն ղԿոստանդինն առաքեաց յաքսորս ի Կոստանդնուպօլիս
առ փեսայն իւրեանց: Այս ամենայն վճարեցաւ ի 2 (6) կամ է (7)
30 տարին:

— o —

Ընդ այնմ ժամանակին յամս տեառն ՌՅԲ (1302) և թվին 127 ր
Հայոց 2ԾԱ (1302) ի վերոյ ասացեալ թագաւորէն Հայոց՝ Հէթմոյ,
որ և էր ի կարգէ Մնուրացն¹⁶, եղև գրդեալ և թտպրեալ մանա-
ւանդ եթէ աղաչեալ իսկ խանն Թարթարաց արևելեան՝ Պաղանն
35 և իջեալ ՃԾՌ (150000)-օք* Խարթարով յերկիրն սուլտանին
Մարայ¹⁷, որ էր ընդ այն ժամանակն Մէլիք Նասրն¹⁸, և էր հա-
սակաւ տղայ, ամաց ԺԴ (14): Նւ հասեալ Պաղանին մինչ ի Դա-
մասկոս առին զնայ: Բայց ղոր տեղիս, որ առնուին ոչ աւերէին
և ոչ զմարդիքն սպանանէին, որ և ի նոյն թագաւորէն Հայոց եղև
40 աղաչեալ զնոյն խանն այրել հրով զԴամասկոս. ասէր խանն, եթէ
«Մեղք մեծ է զայսպիսի գեղեցիկ շինուած այրել, այլ ետու զսայ
որդոյն իմոյ և պահեսցի վասն նորա»¹⁹, Իսկ սուլտանն զօրաժօ-
ղով եղեալ զայր մերձ Դամասկոսի իրր Փարսանկա Ը (8) և անդ

* Մյուս տարբերակներում ՄՌ (50,000):

ի անդի ամուր յոյժ, որ էր բլուրք քարայծայոս, անդ իջանէր⁵⁰,
 Որո խանն զօրօքն ելեալ ընդդէմ ճակապեցան յայնմ տեղոջ⁵¹,
 Եւ ոչ կարաց սօլտանն զընդդէմ ունել Մուղային փախեալ, զոր
 կոտորեցին անթիւ զՏաճկինն և առին դաւար նոցա և զամենայն
 5 իջևանք նոցա: Իսկ սուլաանն արամբք իրր ժ (10) յուղտ ճա-
 մաղիքս հեծեալ փախեալ ի Մոր: Եւ թաղաւորն Հայոց, քանդի
 էր զօրօք արամբք ժՌ (10000)-օք ընդ Մուղային, անձամբ իսկ
 միայն ԴՌ (4000)-օք արամբք, որք կարացին սրածիս դտանիլ,
 ընտրեցան զկնի թագաւորին և զհետմտին սուլտանին և վարեաց
 10 նոյն թագաւորն զսուլտանն զաւուրս Զ (6) մինչ ի տեղին կո-
 չեալ Տոլի, յոր է ի յաւաղն, մօտ ի Մար, Դ (4) [աւուր] ճանա-
 պարն գնացողացն ըստ ուհմանին⁵²:

Իսկ ի տեղոյն ուր թագաւորն զհետմտաւ. սուլտանին և ուր
 դարձաւ, է ճանապարհ ժԱ (11) աւուր, զի Դ (4) օրն գնաց. և
 15 լինէր, զի ուր իջևանէր սուլտանն յիջևան, ի վաղիւն թագաւորն
 հասանէր*, զի գնայր առաջի թագաւորին իբրև մլոնս, որ է միլ
 ժ (10) կամ ժԲ (12), Այլ իբրև գնաց թագաւորն մինչ ի նոյն
 տեղին Տոլի կոչեցեալն, զի մօտ էր Թահրէր⁵³ և ինքն էր միայն՝
 երկեալ, թէ բմրոնեցի կամ ոչ ընտրեցէ դառնալ ընդ աւազն:
 20 Անդ ի տեղին այն, թագաւորն Հայոց Հէթում, նշան եդ ի դուռն
 նոյն իջևանայ տանն, նայես ի նոյն բարունակն, այսինքն է ի
 Տոլին, որ է ի մէջ բակին, եհար թրօք և հետս արար ի գուշակ
 և ի նշան, եթէ թագաւորն Հայոց վարեաց մինչև աստ, զսուլ-
 տանն և ոչ կարաց հասանել: Այլ գրեաց ևս ի յորմն, եթէ շատ
 25 է ինձ այս, զի մինչև յայտեղի եկի հսկարար և ըռոն զօրու-
 թեամբ, զոր ոչ ոք ի նախնեացն իմ, նայե ոչ բնաւ ոք քրիս-
 տոնեա զօրութեամբ և վարելով մինչ աստ եկեալ է այսմ ճանա-
 պարհաւ: Եւ զայս առնելով ապա դարձաւ թագաւորն, որ նշան
 և զարկք թրի՝ նորա կան մինչև ցայսօր անդ ի յիշատակ իրին:
 30 Եւ քանդի ի վերո զհանգամանս կռվոյն ոչ յիջեցաք, այժմ սա-
 կաւ ինչ ի մէջ բերցուք: Արդ՝ լինէր զի իբր ճակատէին յօրն
 այն, Տաճիկքն արարեալ էին իբր մարդիքս թաղքեայս և սգե-
 ցուցեալ իրս փայլունս, զի յարեգակէն փայլէին և եղեալ էին
 զայն ի վերայ ուղտուց իբրև ժՌ (10000)**, և Եւ զամենայն 128
 35 ուղտան ի շարն կանկնեցուցեալ և ինքեանց զօրն ամենայն յե-
 տոյ ուղտուցն ի ծածկոյթքս կային: Իսկ Մուղալ զօրքն ոչ ինչ
 հնարս ունելով կայր իբրև ոչխար առաջի նոցա: Եւ իբր խմրեցաւ
 պատերազմն հայէին զօրքն Բ (2)*** առ իրեարս և ոչ մարտըն-
 չէին: Արդ՝ վասն զի Մուղալինն, որ է Թաթարնին, ոչ ինչ այլ
 40 ունին զէնս, բայց միայն նետ, վասն այն Տաճիկքն մնային, զ[ի]
 ձգեցեն զնետս իւրեանց և հարցեն զթաղքեայ մարդիքն, որք ի
 վերայ ուղտուցն և ինքեանք յետոյ անփնաս մնացեն. և իբր
 նոքա դատարկանային ի նետից, ինքեանք յարձակեցին ի վե-

* № 3079 տարբերակում գի Դ (4) օրն գնաց... ի վաղիւն քաղաւորն հասանէր չէք:

** № 2038, 3079 տարբերակներում Ծ: (50,000):

*** № 3079 տարբերակում Բ (2) կռվմանց:

րայ նոցա սրով և կոտորեսցեն զամենայն: Զոր և արարին այն-
 պէս, քանդի մինչ ոչ որն ի նոցանէ յարձակէր ի կոխ: Տաճկնին
 ետուն իւրանել ի յինքեանցն արանց Ե (5) կամ Զ (6) Ռ (1000)-ս,
 5 րնդիրս արանց, որպէսդի պատճառ լիցի Թաթարացն նետելոս և
 արձակեցան այնոքիկ արքն գմիրք⁵¹ ի վերայ Թաթրնուն: Եւ
 իսկոյն հրաման հանէր խանն Թաղաւորին Հայոց, իւրովքն դի-
 10 պնդ ընդ յառաջնահեծեալսն այն Տաճկացն, որք հակապէս իսկ
 Թաղաւորն իւրով քրիստոնեայ զօրօքն, որք էին իբր թէ ԳՌ (3000)
 հեծեալս իբր առի[ւ]ծս դիմեալ ի վերայ անօրինացն, զնշան սրբո
 15 խաչին առաջի տանելով, կոտորեցին զվեց Ռ (1000)-ն այն զՏա-
 ճիկան, զի ոչ դե[ր]ծան ԵՃ (500): Իսկ ի քրիստոնէիցն ոչ մե-
 10 ասն, յայց միայն Ի (20). և այն վասն երիվարացն, զի քարուտ
 էր տեղին և երիվարացն գործել ոչ կարէին, այլ անկանէին: Եւ
 իբրեւ այս գործէր Մուղալն ամենայն ի նետել սկսանէր: Եւ ընդ
 15 դառնալն Հայերուն ի տեղին իւրեանց, որ է աջոյ կողմն զօրուն
 և Մուղալն ևս իբր թէ դադարկացեալք ի նետից թիկունս դար-
 ձուցին և դիմախուստ գնային: Յայնժամ արին այն, գմիր Թա-
 20 զաւորն Հայոց արշաւեաց առ խանն Ղաղան, զի էր ի վրանն իւր
 րադմեալ և գուսանքն առաջի նորա հարկանէին և մտեալ Թա-
 25 զաւորին առէ. «Տէր իմ խան, ծաղր և նախատինք եղեր ամենայն
 երկրի»: Նայ պատասխանեաց. «Զրնչ եղև, վասն որո ասեսդ».
 առէ Թաղաւորն. «Զօրքն զփախուստ առին և դնան»: Իսկոյն
 խանն ի դուրս վաղեալ ետես, զի թիկունս էր դարձեալ ամե-
 30 նայն զօրն իւր և գնային: Յայնժամ գոջեաց բարձրայձայն խանն՝
 ճահ, որ լսի՝ այս է: Եւ հրաման հանն, եթէ «Ամենայն ոք ի դո-
 րաց իմոց, ոչ առնէ զոր ես առնեմ՝ մեռցի»: Եւ, ըստ օրինի Մու-
 35 զուլին, վճիռն այն՝ բերանոյ ի բերան լու եղև յամենայն զօրսն:
 Եւ խանն ի սրտմտութենէն զգտակն, որ էր ի գլուխ իւր, էզարկ
 ի դետին: Եւ ի ծունկս անկեալ Գ (3) նետս նետեաց ընդդէմ
 40 Տաճկացն. որ ի նոյն քթթեւականն հրամանն սաստկութեան զօ-
 րացաւ և ամենեքեան Թաթարանին ի ծունկս անկեալ սկսան
 իւրաքանչիւր զիւր Գ (3) նետն նետել: Եւ լինէր զի յայնմ ժամէն,
 որ էր աւուրն իբրեւ ժամ Գ (3) և մինչև ցինն ժամն ծածկեցաւ
 45 օքն և իբր ի շքի կային ներքո մարդիքն ի Թանձրութենէ նե-
 35 տիցն, որ գնայր ընդ օդն: Եւ յայնմ հետէ ի նոյն հարուածոց նե-
 տիցն ապայ յաղթեալ մանաւանդ եթէ իրտորեալ զորն Տաճկաց
 զփախուստ կալան, որպէս վէրո գրի: Եւ յայց Թաղաւորն Հայոց
 դարձեալ ի վարելոյ զսուլտանն և եկն յերուսաղէմ և եգիտ զա-
 50 մենայն անօրէնքն փախեալ և սպանեալք ևս ի Թաթարացն, որ
 նախքան զնայ էին եկեալ: Եւ մտեալ յերուսաղէմ ժողովեաց բա-
 զում քրիստոնայո, որք Թաճեալք էլ[ն], ծակս վասն երկեղին և
 կացեալ անդ աւուրս ԺԵ (15), տօնս մեծայհանդէսս և պաշտօնս
 քրիստոնէականս, մանաւանդ թէ տօնախմբութիւնս պատարա-
 55 քաց ետ կատարել ի սուրբ անդիսն Երուսաղէմի: Եւ գնացեալ
 յամենայն ուխտատեղիսն սուրբ, միթարեցաւ հոգով, որ մինչ
 էր յերուսաղէմ, հրաման և սիգեղ գայր նմա ի խանէն՝ զԵրու-

սահղէմ քաղաքն սուրբ, իւրօվ կողմամբքն, նմա ի տուրս ե ի
 տաքուածս տալօվ⁵⁵, և ապա դարձաւ ի Դամասկոս առ Խազանն
 և ձմերեցին անդ ի Դամասկոս: Իսկ խանն թողոյր պահապանս
 Դամասկոսի և այլ գաւառին հազարապետ⁵⁶ մի իւր հազարօջն և
 5 ինքեանք ելեալ գնացին յաշխարհն իւրեանց⁵⁷, Եւ եղև մինչ ան-
 ցին աւուրս ժ (10) և հեռացաւ խանն, յարեան Տաճիկքն ամե-
 նայն, որ էին յերկրին, զի զոչ ոք էին սպանեալ Մուղալքն, եթէ
 մեր են այժմ պառկոսք, որք յարեան ի վերայ և կալեալ զա-
 մենայն Թաթրնին մերկացուցին և արտաքսեցին⁵⁸, և յարուցին
 10 դարձեալ զպարոնն Դամասկոսի || որ էրն ի սուլտանէն կարգեալ, 128
 Արդ՝ իբրև զայս լուեալ խանն բարկացաւ յոյժ, Իսկ Թագաւորն
 Հայոց ելեալ ի գաւառէն իւրմէ առժամայն սրբնթաց Գ (3)
 արամբք և զՊ (40) աւուր ճանապարհն ժԱ (11) օր ընթացաւ և
 բողոքեալ առաջի խանին, զօձիսն պատաստեալ ասէր⁵⁹, Եւ այդ
 15 բանք են զոր ես ասէի, թէ ջննջեա զՏաճիկսն ամենայն և դու
 ոչ կամեցար. արդ այժմ յազգէ ազգ նախատինք եղև քեզ և զի
 արդ կարես տէր կոչել զքեզ, զի հալածական և խաբեալ ես ի
 յոչինչ ազգէն Տաճկաց և այլ այսպէսի բանս բաղումս ասէր նմա:
 Որոյ խանն երդուեալ ի գլուխն իւր զի ի ձմեռն, որ գայցէ, առցէ
 20 զվրէժն ամենայն ի սուլտանէն: Որ և պատուէր տայր Թագաւո-
 րին Հայոց պատրաստել զինքն գնալ անդ դարձեալ: Եւ դարձաւ
 Թագաւորն յաշխարհն իւր և պատրաստեաց զինքն փարթամ և
 ընտիր զօրօք հեծողաց ձիաւորաց, մահմէդաւոր ԴՌ (4000), հե-
 տեազաց Ռ (1000)⁶⁰, չարխողաց⁶¹ ԴՃ (400), և այլոց արուես-
 25 տաւորաց բազում, վասն բերդիցն առնելոյ. քանզի էր սահմա-
 նեալ ի խանէն կարգաւ ի մուտն սկսեալ զամենայն բերդ և ամ-
 բոց առնուլ և քակել և ապա յառաջ գնալ: Իսկ ամենայն արք,
 զորս ընդ իւր տարաւ Թագաւորն Հայոց, յայնժամ էին ժՀՌ
 (18000): Այլ իբրև եկն ժամանակ գնալոյն մանաւանդ, թէ զա-
 30 մենայն ամառն զայն սուլտանն գանձիւք կաշառեաց զամենայն
 մերձաւորսն⁶² և զխորհրդակիցսն խանին և ասացին նմա և ետուն
 թոպիր, եթէ՝ երկիրն շող է և վատ օգ և բազում կայ ֆլասս, մի
 գնացեսս անձամբ, այլ յղեայ զայլ ոք. և հաւանեցուցին զխանն:
 Իսկ նայ կարգեաց ի տեղի իւր, գլուխ զօրուն զերկրորդն Թա-
 35 գաւորութեանն իւր Խուլթլուշահ կոչեալ պարոնն: Եւ Խուլթլու-
 շահն առեալ միայն ՂՌ (90000)⁶³ Թաթար, գայր հասանէր ի Դա-
 մասկոս: Եւ վաղվաղակի Տաճկնին թողին ի նայ զքաղաքն, ըստ
 առաջին կերպին, Իսկ Թագաւորն Հայոց գայր, յիւրն գաւառէն
 ըստ վերոյ ասացեալ կերպին, իւրօվքն հանդերձ, որք և առացին*,
 40 եթէ սուլտանն ևս եհաս ի նոյն տեղին առաջնո կովոյն: Եւ ել-
 եալք ի միւս օրն ի Դամասկոսէ հասեալ ի տեղին և իջին դար-
 ձեալ ընդդէմ միմեանց: Ջօրքն զերիս աւուրս ոչ պատերազմե-
 ցան բնաւ: Իսկ Թագաւորն ստիպէր միշտ զպարոն Թաթարացն
 յուղել պատերազմ և նայ թուլանայր, վասն զի, որպէս ասի յո-
 45 մանց, եթէ՝ Թ (9) բեռն ոսկի էր առեալ ի սուլտանէն ոչ կուռել,
 զոր և արար իսկ: Զի յաւուրն Դ (4) իբր սակաւ մի շարժեցին

* Բնագրում ուրի և ասացին հրկնմած է:

Տաճիկքն կոիւ առժամայն զօրն Թաթարին զփախ դարձաւ և
 ելեալք անդի ամենեքեան դարձան ի Դամասկոս և իրրև հասին
 ոչ մտին անդ, այլ արտաքոյ գնացեալ փախչէին և Հայերն զկնի.
 զի ոչ իշխէին ի սուլթանէն թոգուլ զընկերութիւն Թաթարին.
 5 Իսկ Տաճիկքն, որպէս և են տրայիտուրք⁶³, դաւ պեղծ գործեալ
 էին, քանզի թողեալ էին զԲ (2) գետն Դամասկոսի ի վերայ
 դաշտին մեծի, որ է իբր թէ ճանապարհ աւուրց Բ (2) յարեւից
 կողմն Դամասկոսի, ընդ որ էր ճանապարհ Թաթարին, զի այլուր
 անհնար էր գնալն, քան ընդ այն, Եւ նոցա թողեալ զջուրն ի
 10 վերայ այնմ դաշտին և խմորեալ զամենայն ի ցեխ և ի տիղմ
 դարձուցեալ ի յոր մօրատ անկեալ ամենայն զօրն Թաթարին և
 Հայոցն ևս խրեցան և ոչ կարացին ելանել⁶⁴, Եւ այնպէս ամե-
 նեքեան անդ սատակեցան, ոչ զերծեալ ի Թաթարացն Դ (4) կամ
 ԵՌ (5000), իսկ ի Հայերուն ոչ եկին ի տուն ԵՃ (500): Դար-
 15 ձեալ այլ իմն չարագոյն պատահէրն, զի որք ի վերայ մեռեալ մարմ-
 նոցն մարդկան ի ձիոց հազիւ միւսոյն ի միւսն անցանելով ի
 խառախն զերծանէին ի տղմոյն զկնի աւուրց: Եւ գային առ ափն
 դետոյն Եփրատայ, զի ընդ այն էին անցանելոց, գտան զգետն
 անչափ յորդոր* և ոչ կարէին անցանել⁶⁵, բազումքն անգ խեղ-
 20 դէին: Այլ և ոմանք Թաթարք տկօք կամ ցախեա իբր թէ նաւս
 շինէին և կապէին ի բազում ձիս զայն և անցանէին ի միւս ճոյ
 գետոյն ի միւսն և այնպէս զերեք կամ զԴ (4) օր աւալայ թէ¹²⁹ և
 կարէին անցանել. լինէր ապայ զի մնացեալ Թաթարն, զմնացեալ
 Հայերն այնպէս անցուցանէր, եթէ տային ինչս վարձս, որ և
 25 պատահեաց ևս զի բազումք անցեալք յայնկոյս գետոյն, ոչ կարէին
 ելանել, զի ջուրն մղէր զնոսա և հանէր ի փուլս և յապառաժ
 տեղիս: զի ոչ կարէին ի վեր ելանել, որ և բազումք ի նոյն փա-
 տակերն ի սովու մեռան, և այլ զշուն[ս] և զձիս և զմարդ[ս], զոր
 գէշն ջուրն բերէր, քաշէին և ուտէին: Ասի ևս, եթէ ոչ երևէր
 30 եզրն Եփրատայ, այնչափ էր տարածեալ: Արդ՝ Թագաւորն Հայոց
 զերծեալ այսպէս ի նեղութեամբ գնաց բոլորք ի խանն ի վերայ
 այնչափ նեղութեանցն և** աղէտին գործելոյ⁶⁶, ընդ որոյ վիշտ
 ասեն, եթէ ելաց խանն ևս: Եւ երդուաւ հաստատութեամբ, զի ի
 յառաջակա ձմեռն անձամբ իջցէ յԵգիպտոս. որ և հրաման եհան,
 35 զի յամենայն զօրքն իւր իւրաքանչիւր Ժ (10)-էն է (7) հեծա-
 նէին ընդ նմա, որ և ասեն եթէ լեալ էր. զի եթէ հեծեալ էին
 այն ամենայն լինէր թովմանս ԺԴ (14), որ է ամեն թուման
 ԿՌ (60000) այլ: Իսկ սուլտանին լուեալ զայն բազում և ան-
 40 թիւս ոսկի յդեաց շրջակայիցն խանին, զի մի թողացուցեն այնմ
 իրին լինիլ և եթէ այն լինիցի անցեալ ջնջի ամենայն տաճկու-
 թիւնն: Զոր առեալ պարոնացն Թաթարին զգանձն բազում խօ-
 սէին յականջս խանին մնացուցանել զգնալն իւր. և նայ ոչ առ-
 նոյր յանձն: Իսկ ի միջոցի աստ բարի խանն այն քաղաքն ետ
 բազում տուրս պարգևս և սիգեզս և ազատութիւնս և հարկայ-

* Մյուս տարբերակներում զի գայր դարիւ և դարիւ փի. անչափ յորդոր:

** Մյուս տարբերակներում նեղութեանցն և չիք:

պահանջութիւնս ևս յիւր երկրէն յամենայն ամի Հայոց թագա-
ւորին ընդ կորստեան և զենին նորա և ասէ. «Գնայ ի տուն քո
և ուրախ լեր, զի ես ձեռամբս առից զվրէժ քո ի Տաճկաստա-
նացն»։ Իբր և մերձեցաւ ժամանակ գնալոյ խանին ի վերայ
5 սուլտանայ և տեսին իշխանքն իւր, թէ ոչ կարէին դարձուցա-
նել զնայ, զի մի գնասցէ, գեղ մահու ետուն նմա և ելաւ ի կե-
նացս։ Եւ ասի իսկ, և թէ կին նորա, զոր առաւել սիրէր, գեղեաց
զնայ և մեռաւ⁶⁷ և ամենայն խորհուրդ խարանեցաւ և ջան թա-
գաւորին Հայոց։

10 Ընդ այսմ իսկ ժամանակիս ՌՅԷ (1307) և Հայոց թվին 129...
2ՄՁ 1307) նուէմբեր ժէ (17) սպանաւ վերոյ ասացեալ պարոնս
Հայոց Հէթում և դեռարոյս թագաւորն Հայոց Լևոն⁶⁸, եղբորորդի
Թօրոսին, զոր սայ Հէթումս թագաւորեցուցեալ էր ընդ իւր դեռ
ևս Գ(3) ամ էր⁶⁹։ Սոքա երկոքինն և այլ ևս պարոնայք իւր-
15 եանց սպանան ընդ սոստ ի թագաւորութիւնն իւրեանց Գիլիկ-
եայ ի ստորոտն կամ թէ ի գեօղն Անաւարդո գղեկին յանօրէն
պարոնէն Թաթարայ ի Բիւրզղուէն։ Իսկ յետոյ եղբայր թագաւո-
րիս Հէթմոյ Ալինախ անուն գնաց ի խանն ի դանգատ և ետ
սպանանել զնոյն Բիւրզղուն դատաստանաւ⁷⁰։

20 Ընդ այն ժամանակն բռնակալութեանն Պալարին և յամս 144 ր
տեառն ՌՅԻԱ (1321) անօրէն բռնաւորն Թաթար Տամուրտաշն⁷¹,
որ էր պարոն Հոռմաց երկրին, զկնի մահուանն բարեպաշտ թա-
գաւորին Հայոց Օշնի, որ փոխեցաւ յաստեացս և եթող զորդին
իւր զԼևոն⁷² տղայ ամաց. և զի իշխանքն թագաւորեացեն՝ մինչ
25 տղայն ի հասակ գայցէր։ Յորում ժամանակի ասացեալ Դամուր-
տաշն բազում հեծելօք, աւելի քան ԼՌ (30000) և բազում հետե-
ւակօք, այսինքն ամենայն օրդուիւն իւր, ակամայ և բռնութեամբ
ի յաշխարհն Հայոց ի Գիլիկեա մտաւ և բազում աւերս արար,
սպանութիւն և աւար. և բազում ջան եղ եթէ ամրոց ինչ կարի-
30 ցէրն առնուլ, բայց ոչ կարաց։ Այլ և ի նոյն Հայերոյն Թա-
թարնին բազում պակասութիւն և կորուստ ի յոմանս յանցս և
ի կիրճս ընկալան. և եթէ ոչ էր լեալ, զի ասէր Դամուրդաշն, եթէ
«Ի սիրելաբար և ի տեսութիւն եմ եկեալ». և վասն այն զի եր-
կընչէին Հայերն յայտնի ֆէասել Թաթարնոյն, ապայ թէ ոչ դա-
35 մենայն կոտորեալ էին և սպառեալ։ Եւ իբր ել Դամուրդաշն ի
Հայոց ի ձմերայնոյ գոլօվ, ի գարունն մերձակայ, ապրիլ Ի (20),
զօրքն սուլտանին ՔՌ (40000) հեծեալս և այլ անչափ հետեակս
եկին ի նոյն երկիրն Հայոց. և եկեալ ի քաղաքն Էգիոյ, որ է
Մյասս։ Յերկրորդ օրն, յօր տօնի սրբոյն Գէորգայ, ԻԳ (23) ապ-
40 րիլի, առին զմինային⁷³ բերդն, զի ծօղն ցամաքեցաւ և ի ներս
գնաց. և Տաճկնին ի ծօվէն եկին և կտրեցին զճանապարհն, որ ի
ներսի բերդն, [և ի ծ]օվն ոք չկարէր գնալ. և գերեցին անդ

[անթիւ] անձինք և անբաւ աւար առին [և ապա ն]ստան սղարե-
 ւօյ ի վերայ ներսի բերդի[ն]։ Եդին բ]արան և զամենայն ի փուլ
 ածին և զամենայն [դրունսն]։ և զբէշքայ⁷⁴ քաղաքին բերեալ կամ-
 [ուրջ կապ]եցին ընդ ծովն ի ներս, մինչ եկին [մերձ պար]իսպի
 5 բերդին և նետախորով առնէ[ին զմարդ]իքն, որ քայլէին ի դրանն
 կողմն [դղեկին, ո]րով յամենայն կողմանց սաստկաց[աւ մարտ]ն։
 Այլ և թագաւորն Կիւրոսի առաք[եաց խա]լէս Թ (9) յօգնութիւն,
 քրիստոնէից[ն], որք կոր]ըստեան եղեն պատճառ, քան փրկու-
 [թեան, քա]նդի զամենայն ոք, որք փախչէին ի բերդէն ըն-
 10 դունէին և առնուին և զամենայն ինչս [ևս որ լինէր], զի ոչ ոք
 մնաց ի բերդն ի ք[աղաքաց]եացն, այլ իւրեանց ընչիւքն գնա-
 ցին ի [խալեքն]։ Իբր այս լինէր ի գիշերի հուր [արկին ի բ]երդի
 և թողեալ ի բաց գնացի[ն ընդ ծո]վն։ Այսպէս կորեաւ Այաս եր-
 կոքին [Իհրդո]վն իւր, գերեալ ի Տաճկացն։ [Ջայս աղ]էտ կսկծա-
 15 նաց իբր լուաւ պապն [Ջոհան]էս առաքեաց ի Ռ (30000) ֆլօրինս
 ոսկոյ, զի զ[արձեալ շին]եացեն զբերդն Այասոյ, որ և առ[եալ
 զայ]ն Հայոց։ Եւ բազում յոյժ յաւելին [ի վերայ և շ]ինեցին
 զբերդսն զայնոսիկ առ[աւել յոյ]ժ ամրայգոյն և բարձրագոյն։ Եւ
 [եկաց ի]բր ամս ԺԶ (16) և ապա ի ժամանակս սոյն Պ[աւա-
 20 րի]ս⁷⁵ և պապութեանն Բէնէգիքթոսի, [դարձեալ եկին] Տաճիկքն
 մեծաւ սաստիւ, զի [զամենայն Հայք սպան]ացէն, որ երկուցեալ
 Հայերուն, [կամ]աւ ետուն զԱյաս և զայլ ամենայն բեր[դս և գե]ր-
 կիրն, որ յիւրեանց կողմէ Զահու[ն գետ]ուն, զոր առեալ ունին
 մինչև [ցայսօր] նոյն մահմետականքն։

ՔԱՆՈՒԹՎԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում «Յազազո հիացականացն որք ի կողմանս զոն իմպէննիո կողոյն» վերնագրի տակ նշված է նաև վերորերայ հատվածը, հարավոր է, որ դա Ն. Պալիենցին չի պատկանում, բայց որովհետև վերաբերում է Կիլիկիային, նպասակահարմար դասնք հրատարակել:

2. Խոսքը ինովկենտիոս IV պապի մասին է:

3. Կաֆայի եպիսկոպոս Թադեոսի կողմից պատարագի մեկնությունը թարգմանվել է 1354 թվին: Այդ մասին մեզ հաղորդում է ժամանակակից գրիչ Թորոս Ալվրցին. «Կատարեցաւ զիրքս այսմիկ զործոյս յամի մարդեղութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ԹԵՄԼԳ (1354) || յամսեանն || թարգմանեցաւ զիրքս, որ կոչի մեկնութիւն պատարագին ձեռամբ Թադէոսին եպիսկոպոս Կաֆային, ի կարգէ Գարողողացն: Եւ զրեցաւ ձեռամբ արուղ և փցուն զըջի Թորոսի արեգի Ալվրցոյն ի յամին նոյնուօմ տեառն մերոյ և Փրկչին ԹԵՄ և Դ (1354) յամսեանն աւղոտաոսի ԺԼԳ (13), աւարտեցաւ զիրքս ի քաղաքիս, որ կոչի Պիղ...» (ՏԾԿՄՎ, էջ 7, հմմտ. Ալիշան «Այլաբաաս», էջ 545, ՀԶՀ, էջ 407—408, № 4065, էջ 157): Ալիշանի կարծիքով Թադեոս Կաֆայեցին մահացել է 1357 թվին (նույն տեղ, էջ 545):

4. Բնագրում նկարագրված է 1260 թվի դեպքերը:

5. Իմա Բազազո:

6. Այլաութ րերդ, տե՛ս ՄԺ, 1, էջ 59, ծանոթ. 62, վերևում, էջ 89, ծանոթ. 177:

7. Իմա Կլեմենս VI պապը:

8. ՏԵս նախորդ ծանոթ.:

9. ՏԵս և հմմտ. ներքևում էջ 513: Մի այլ հիշատակագիր, Ղրիմից, 1349 թվին նշում է, որ մահտարածմը տեկնով 15 ամիս, դեռ շարունակվում է. «Այլ գոյ բան յիշելոյ և յոյժ զարեւելի, զի մինչև ցայժմ ԺԵ (15) ամիս է, որ անպատմելի և անթուելի մեռան տարածմ մահուամբ, սկսեալ յարեւելից՝ հիւսիսական կողմամբ մինչև աստ, և զնաց մինչև յարեւմուտ, զոր ոչ ոք կարէ ընդ զրով արկանել, զի վասն մեղաց մերոց եկն ի վերայ ամենայն աշխարհի, և զեռեւ մինչև ցայսաւր, և ոչ ոք է, որ անցուցանել կարէ զարեւելութիւնս եկեալ...» (ՀԶՀ, էջ 358): Թե այս համահարակը եկել է Հայաստան, աղբյուրները ոչինչ չեն հաղորդում, միայն 1347 թվի մի հիշատակարանում կարգում ենք. «Ի Յեղընկան եկի խաղաղութեամբ և եղև մահաարածմ, ...» (ՀԶՀ, էջ 353):

10. Այսինքն մինչև 1362 թվի հունվարը. ահա և հմմտ. ներքևում, էջ 513:

11. Գլխառն Լուդինյան, լատինամոլության համար 1344 թ. հայերը սպանեցին:

12. Բնագրում Մ. Լեհացին նկարագրում է Տիառոի կողմից Երուսաղեմի պաշարման, զրավման և հաջորդող սովի պատմությունը, որին Ն. Պալիենցն ավելացնում է վերոհիշյալ հատվածը:

13. Այս հատվածի նախորդող մասում Մ. Լեհացին խոսում է հռոմեական կայսր Թեոդորոս առաջինի և որան ժամանակակից մարդկանց ու դեպքերի մասին: Ներսես Պարթևի մահը տեղի է ունեցել 373 թվին: Վաղուց ապացուցված է, որ Ներսեսը թունավորման հետևանքով չի մահացել (մանրամասն տես Ա. Գարազայան «Քրիստոսական պատմութիւն Հայոց», մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 144—145): Դեպքը պատմվում է ըստ Փ. Բուզանդի:

14. Բնագրում Մ. Լեհացին պատմում է, թե ինչպես Լուդովիկոս I-ի թագավորության ժամանակ (810—835 թթ.) մեկ անգամ կարկուտի հետ ընկնում է մի մեծ քար, այնուհետև Ն. Պալիենցն ավելացնում է սույն հատվածը:

15. ՏԵՍ վերևում, էջ 177, 190, ծանոթ. 9, ներքևում, էջ 513:
16. Իմա Ավինիոն, քաղաք հարավ-արևելյան Ֆրանսիայում:
17. Խոսքը չենք բերում III-ի մասին է:
18. Եթե ստույգ է հեղինակի դրած մեր թվականության 1107 թիվը, ապա «Հայոց ԵՂԽՁ» պետք է ուղղել «ԵժՄՁ», թեև երկուսն էլ ստույգ չեն: Ռուբենի իշխան հռչակվելը սովորաբար նշվում է 1080 թ. (Ալիշան «Սիսուկան», էջ 44, ՄԺ, 1, էջ 74):
19. Այսինքն՝ 1090 թ.:
20. Ն. Պալինցը նկատի ունի Հեթում Գառնիլիանունով հայտնի ժամանակագրությունը, որը, վերևում նշված մի քանի ձեռագրերում, իրոք, հաղորդում է Մ. Լեհացու Գավառապետի հայ թարգմանությանը (ՆՁ 2037, էջ 110ա — 146բ և այլն): Սակայն, ինչպես արդեն ցույց ենք տվել, այդ ժամանակագրությունը պատգանում է ոչ թե Հեթում Գառնիլիան, այլ Հեթում Բ թալալորին (ՄԺ, է. էջ 6:—'Յ): Ն. Պալինցը, ըստ երևույթի, իր ժամանակակից Ստեփանոս քահանայի նման շփոթության մեջ է, (ՄԺ, 1, էջ 68):
21. Որոշ տարբերակներում «ՌժԼԽ» (ՆՁ 2037, 3079, 2038): Ստույգը 1137 թիվն է (հմտ. ՄԺ, 1, էջ 75, 91, ծանոթ. 13): Գրիգոր Երեյը այդ արշավանքը նշում է Հայոց 586 թվին. «Էր յաւուրսն յամառնային, յամիսն յուլիսոյ» «Recueil des Historiens des Croisades» t. 1er, էջ 152):
22. Այդ վկայությունը թեև հաստատում է Ալիշանի («Սիսուկան», էջ 489 — 470) և Մ. Օրմանյանի («Աղավաղում», էջ 1515) հաշվումները, սակայն Ա. Տեր-Միքելյանը դրանք սխալ է համարում (Ս. Անեցի, էջ 296, ծանոթ. 73):
23. ՏԵՍ վերևում, էջ 61, 83, ծանոթ. 114:
24. ՏԵՍ և հմտ. էջ 62:
25. Վկայությունն ստույգ չէ, և ինչ Ա. Ն. Անտոնովը գրավել է 1216 թ. «Եյմսեանն փետրուարի ԺԴ (14) Տեառնընդառաջին...» (Ալիշան, «Սիսուկան», էջ 502, ծանոթ. 2, ՄԺ, 1, էջ 99, 94, ծանոթ. 51):
26. ՏԵՍ վերևում, էջ 147 — 148:
27. Հոռմկալի սուլյն զրավման մասին ժամանակակիցների պատմածը տես վերևում, էջ 92, ծանոթ. 219):
28. Այսպես է գրում նաև Միսաա Համթեյին. («Աղագրանութիւն Հայոց», 1870, Վաղարշապատ, էջ 46), ուրիշ աղբյուրներ հաղորդում են, որ Ստեփանոս կաթողիկոսը մահացել է գերության մեջ (Ս. Անեցի, էջ 153, Ստ. Օրմանյան, էջ 444, 503, տես վերևում, էջ 80):
- Վերջին հեղինակների ասածը հաստատում է մի այլ ժամանակակից, որը հաղորդում է այդ տարիներին վերաբերող ուշադրավ այլ տեղեկություններ: Դժբախտաբար, մեզ հետաքրքիր հիշատակարանը թերի է:
- «...Կատարեցի...աւետարանս եւ Թորոս ի սուրբ և ի գերահռչակ ուխտս Դրազարկ ԶԽ (1291) թուականին, ի թաղաւորութեանս բարեպաշտ և աստուածասէր արքային Հայոց Հեթում, որդւոյ Լեւոնի. ի գաւռն և ի դժնգակ ժամանակին, որ էր հալածուած քրիստոնէից, զոր յայսմ ամի քանգեալ աւերեցան զեղեցկալէն քաղաքն Հոռմկայեցոց ծովեզերայքն Տրապաւսոյ և Աքայիոյ և եկեղեցիք քրիստոնէից եղեն հաւտից և խաշանց փարախ: Եւ զկնի մի ամի առաւ աստածարեալ զդեանն Հոռմկալ ի գոռոզէն փարաւոնէ: որ էր աթոռ հայրապետացն Հայոց և սպասք սրբութեանն, զերի վարեցաւ հանդերձ մեր զլիսովն՝ հայրապետաւն, որոյ անուն Ստեփանոս. և հասեալ ի քաղաքն Դամասկեա ճգնաւորական հանդիսիւ փոխեցաւ յաստեացս և եթող սուղ անմխիթար աղգին Հայոց և յայնժամ խորհուրդ ի մէջ առեալ թաղաւորն Հայոց Հեթում բոլոր ուխտիւն եկեղեցւոյ և իշխանաւքն հանդերձ շնորհել բերդ ամուր և երկիր առատ սր. աթոռոյ Լուսաւորչին առ ի հաստատել վերստին: Եւ առաքեն զիմա նուաստութիւն և զսիրելի և զսննդակից եղբայրն իմ զպատուելի եպիսկոպոս զտէր Թումաս, յաշխարհս արևելից առ ի մեծարանս եպիսկոպոսաց և իշխանաց դալ վերստին նորոգել զաթոռ սուրբ Լուսաւորչին. և մեզ հրամայեալ ի թագաւորէն և ի սուրբ ժողովոյն յառաջագոյն դալ ի դիրս. սր. առաքելոյն Թադէոսի առ գերահռչակ և արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացուն, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս Թադէոսի առաքելու: Եւ յայսմ ժամանակի փայլէր իբրեւ զշահ վառեալ ի մէջ գիշերի, որ էր նաւահանգիստ վտանգելոց, քաղցելոց և ծարաւելոց, շնորհաւք սուրբ առաքելոյն: Եւ Ը (8) ամաւ յառաջ եկեալ սուրբ արքայն Հայոց Լեւոն, բարի և սնուցող և երախտաւոր, տէրն իմ, յայս սուրբ ուխտս և բաղում սէր դտեալ արքային Հայոց ի սիրոյ եպիսկոպոսէս՝ տէր Տիրացուէ. նաև եւ նուաստս Թորոս վայելեալ ի սէր սորա և հ...» (ՆՁ 9223, Գ, նույնը տես ՆՁ 482 ձեռագրում, էջ 53բ):

29. Անձանոթ վայր:
30. Հմմա. ՄԺ, 1, էջ 86, տեւ նաև վերևում, էջ 80:
31. Նկատի ունի Դրեդոր է. Անավորդեցի հաթողիկոսին (1293—1307 թթ.), որը ձգտում էր հայերի կաթողիկոսացանք:
32. Լեոն Բ-ի մահից՝ 1288 թ. փետրվարի 6 (տեւ վերևում, էջ 169, ծանոթ. 174) մինչև Հեթում Բ-ի կրոնավոր դառնալը՝ 1293 թ. (ՄԺ, 1, էջ 86), իբրեւ տեւում է հինգ տարի:
33. Անվանապես տեւ Հեթում Բ-ի մոտ (ՄԺ, 1, էջ 83—85, և վերևում, էջ 105):
34. Տեւ նաև ՄԺ, 1, էջ 86:
35. Տեւ վերևում, էջ 105:
36. Իմա Հովհաննես:
37. Այս դեպքերը, ըստ Հեթում Բ-ի, առկա են ունեցել 1293 թ. (ՄԺ, 1, էջ 86):
38. Նույնը ինքը Հեթում Բ. (Հովհաննես Minor):
39. Այս հաստատում է նաև Հեթում Բ-ն, ըստ որի նա կրոնավոր դարձել է 1293 թ. և նույն թվին էլ նորից ստանձնել թաղապետական իշխանությունը (ՄԺ, 1, էջ 80, 87):
40. Այսինքն՝ 1294 թ., տեւ նաև Հեթում Բ., ՄԺ, 1, էջ 87:
41. Այսինքն՝ 1295 թ., տեւ նաև Հեթում Բ. (ՄԺ, 1, էջ 87), վերջինիս մոտ չի ասվում, թե ինչու է թաղապետական իշխանությունը նորից հանձնել թորոսին:
42. Այսինքն՝ 1296 թ., տեւ նույն տեղ, էջ 87, 106:
43. Ն. Պալիենցը իր մի այլ աշխատության մեջ Սմբատի իշխանությունը նշում է երկու տարի՝ մինչև 1298 թ. (տեւ ներքևում, էջ 205): Ավելի ստույգը սա է:
44. Դահակալական այս պայքարի մասին համառոտ ահա ՄԺ, 1, էջ 86—87, 106, որտեղ նշված է, որ թորոսը բանաբարկված էր Մուղղունի բերդում, իսկ Հեթում Բ-ն՝ Բարձրբերդում (տեւ նաև վերևում, էջ 150, 170, ծանոթ. 193):
45. Ն. Պալիենցը ներքևում (էջ 205) հոստանդինի թաղապետության ժամանակը մոտավոր հաշվով նշում է մեկ տարի: Ավելի ճիշտն առաջարկվող վկայությունն է, որովհետև Հեթում Բ-ն թաղապետական իշխանությունն երրորդ անգամ ստանձնել է 1299 թվին: Այս պայքարի մասին խիստ համառոտ հիշում է նաև Մ. Համթեռին (ՇԱՀԱԲԱՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՐԳՈՒՄ, էջ 47—48):
46. Իմա, Ֆրանցիսկյան վանական միաբանությունը, որի անդամները կոչվում էին Կրասեր եղբայրներ՝ (իտ.) Frati Minor:
47. Ն. Պալիենցը մի փոքր սխալվում է: Քոսքը վերաբերում է Ղազան զանի Սիրիա կատարած առաջին արշավանքին, որը տեղի է ունեցել 1299 թ. աշնանը և 1300 թվի զարնանը (մանրամասն տեւ Ռաշիդ-ադ-Ղին, հատ. 3-րդ, էջ 182—186):
48. Լեոն-Պալիի համաձայն Նդիպաոսում այդ ժամանակ, երկրորդ անգամ, (1299—1309 թթ.) իշխում էր Նասիր Նասիր-ադ-Ղին Մուհամմեդը (էջ 63):
49. Ղազան զանի կողմից Դամասկոսի զրավման մասին մանրամասն պատմում է Ռաշիդ-ադ-Ղինը, բայց նա լռում է Ն. Պալիենցու հաղորդածի մասին: Ռաշիդ-ադ-Ղինը Դամասկոսի զրավումը նշում է 1299 թ. դեկտեմբերի 31-ին (էջ 184, հմմտ. ՇՀԵԹՈՒՄ Պատմիչ Թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 62—63): Ռաշիդ-ադ-Ղինը նշում է նաև, թե Ղազան զանը, երբ տեսավ Մալդան-ալ-Հաս բնակավայրը, Դամասկոսի մոտ, այնքան հավանեց նրա դեղեցկությանը, որ կարգադրեց այն պահպանել, այդ բանի համար առանձնացնելով զինվորական հատուկ ջոկատ և արդեւից այդիններում մոնղոլ զինվորների թրև զալը, վնասներ պատճառելը և քաղաքացիներին վերավորանք հասցնելը (էջ 184): Ն. Պալիենցու վկայության հիմքում հավանաբար այս տեղեկությունն է ընկած, երբ նա գրում է. ՇԱՀՈՐ տեղիս, որ առնուին ոչ աւերէին և ոչ դմարդիկն սպանանէին:
50. Ռաշիդ-ադ-Ղինի հաղորդմամբ, Ղազան զանն իջևանել է Դամասկոսի մոտերքում դոնվող Մարջրախիտ վայրում, իսկ Հեթում Պատմիչը նշում է. ՇՀԵԹՈՒՄ զինորանս իւր առ գետովն Դամասկոսի՜ (ՇՀԵԹՈՒՄ Պատմիչ Թաթարաց, էջ 63):
51. Ն. Պալիենցու համաձայն հայ-մոնղոլական ուժերի և եզիպտացիների բանակի միջև ճակատամարտը տեղի է ունեցել Վայսնա տեղով՝ ուր իջևանել էր Ղազան զանը, մինչդեռ, ինչպես ճիշտ նշում է Ռաշիդ-ադ-Ղինը, թշնամի բանակների միջև ճակատամարտն ընթացել է 1300 թ. հունվարի 12-ին Ջերեկ-աս-Սալիի վայրում, Դամասկոսից մի քանի ժամվա ճանապարհ հեռու: Այս կռիվներում հայերի և վրացիների մասնակցության մասին հիշում է նաև Ռաշիդ-ադ-Ղինը (էջ 185):

52. Այլ մանրամասնությամբ այս մասին հաղորդում է նաև Հեթում Գատմիչը (տե՛ս «Հեթում Գատմիչ Թաթարաց», էջ 62), իսկ Մ. Համթեցին, թեև շատ բան համառոտում է, բայց ղեկավարը նույնությամբ հաստատում («Աղղարանութիւն Հայոց», էջ 45—46): Եթե նկատի ունենանք, որ Մ. Համթեցին կազմել է նաև Հոմերի կայսրների ցանկը (տե՛ս նույն աեղ, 53 էջից), ապա կարող ենք ենթադրել, որ նա ամենայն հավանականությամբ օգտվել է ն. Գալիենցի սույն թարգմանությունից:

53. Իմա Կահիրե:

54. Վր. Շմիթ, հերոս. նաև բաջ, խեղախ, կտրիճ:

55. Հեթում Գատմիչը համառոտաբար ևս հիշում է Ղազան զանի նվիրատվությունների մասին, ավելացնելով. «ես եղբայր Հեթում զայս ամենայն աչօք տեսի, զի առաջիկայ էի» («Հեթում Գատմիչ Թաթարաց», էջ 62), բայց նա նման բան չի հաղորդում:

56. Բնադրում «Ռապետ» ձևով:

57. Ռաշիդ-ադ-դինի համաձայն, Ղազան զանը Դամասկոսի կառավարիչ նշանակում է Կիփչակին, իսկ Սիրիայում Պապա մոնղոլ զորքերի հրամանատար՝ Խուլուշահին և ուրիշներին (հմտ. «Հեթում Գատմիչ Թաթարաց», էջ 63) և ինքը Դամասկոսից վերադառնում է Թավրիզ:

58. Դամասկոսի կառավարիչ Կիպչակի դավաճանության և մոնղոլական զորքերի պարտության մասին բավական մանրամասն հաղորդում է Հեթում Գատմիչը («Հեթում Գատմիչ Թաթարաց», էջ 64), իսկ Ռաշիդ-ադ-դինը հիշում է հարեանցիորեն (էջ 185):

59. Հեթում Բ-ի և Ղազան զանի այս հանդիպման մասին այլ աղբյուրներից մեկ ոչինչ հայտնի չէ:

60. Այս օղնության մասին ընդհանուր ձևով հաղորդում է նաև Հեթում Գատմիչը («Հեթում Գատմիչ Թաթարաց», էջ 64): Բնադրի «հետեաղաց Ռա սխալ է, այն պիտի լինի «ԺԳՌ», որովհետև քիչ ներքև Հեթում Բ-ի ամրոցը զորքը հեղինակը նշում է ԺԸՌ (18000):

61. Ալիշանի ծանուցմամբ, նշանակում է, պատերը քարոձիգ մեքենայով փլցնող («Հայապատում», Բ, էջ 523, ծանոթ. 7):

62. Հմտ. «Հեթում Գատմիչ Թաթարաց», էջ 64, ուր Խուլուշահի զորքը նշված է 30000: Ռաշիդ-ադ-դինը նշում է, որ 1300 թ. աշնանը առաջատար ջոկատով դնում էր Խուլուշահին, այնուհետև շարժվում էր Ղազան զանը (էջ 186):

63. Ալիշանը հայտնում է, որ նման մի բառ ունի Եղիշեն դարպաս նշանակությամբ, բայց տվյալ դեպքում այս բառը պետք է ունենա խորամանկ, նենդավոր իմաստ («Հայապատում», Բ, էջ 524, ծանոթ. 1-ին): Եղիշենի մոտ դանում ենք «Հարի-թիր» ձևով, Մոդ-պետը պարսիկ ազնվականներին առում է. «Ենեթ է դարհուրեցայք ինչ հողիս ձեր, վաղագոյն առուստուցն ի դարի-թիր եկայք, զի վաղիւ անդ Մոդպետան մովպետ ուստ՝ յաղէ» («Եղիշէի սլատութիւն վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 234): Փորթուգալ փաշան այս բառը սրբադրում է «Դարիմիհր», կամ «Հարիմիր», պահլավերեն նշանակում է «զուռն Միհրի» («Բագ-մավէլա», 1895, էջ 6—7, մանրամասն տե՛ս Հ. Աճառյան «Հայերեն արմատական բառարան», հտ. 2, Երևան, 1928, էջ 454—456): Այսպիսով, «տրայիտուրք» բառը ոչ ձևով և ոչ էլ իմաստով չի նույնանում «Հարի-թիր» բառի հետ: Թեև ընդհանուր «արայիտուրք» բառը համընկնում է Ալիշանի տված խորամանկ, նենդավոր բացատրությանը, բայց այդ բառի ստուգաբանությունը հայտնի չէ:

64. Տե՛ս նաև «Հեթում Գատմիչ Թաթարաց» (էջ 66, հմտ. Ռաշիդ-ադ-դին, էջ 196):

65. Հեթում Գատմիչը հաստատելով այս վկայությունը ավելացնում է. «յորոց միջի դտաւ և պատմարանս» («Հեթում Գատմիչ Թաթարաց», էջ 66):

66. Հմտ. «Հեթում Գատմիչ Թաթարաց», էջ 66:

67. Ղազան զանը մահացել է 1304 թվի մայիսի 17-ին, կիրակի օրը (Ռաշիդ-ադ-դին, էջ 202):

68. Տե՛ս ՄԺ, 1, էջ 88, 89, 90, ծանոթ. 129:

69. Այսինքն, Հեթում Բ-ի եղբոր՝ Թորոսի որդին երեք տարեկան էր, երբ թագավոր հուլակիցը Արիստակես դրիչը 1301—1307 թթ. շրջանում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում զրում է, որ Լեոնը թագավոր օծվել է 1306 թվի հուլիսի 30-ին (տե՛ս վերևում, էջ 170, ծանոթ. 193, հմտ.՝ Ս. Անեցի, էջ 155): Սակայն ժամանակակիցներն այդ եղելությունը նշում են 1301 թվին և այդպես էլ ընդունված է գիտության մեջ (տե՛ս Ալիշան, «Միսուան», էջ 557 և այլն): Երուսաղեմի Մատենադարանի № 596 ձեռագրի հիշատակարանում կարգում ենք. «Արդ՝ գրեցաւ սա ի հուլակավոր անապատիս որ կոչի Խորին... որ

է մերձ ի սահմանս Բարձրերգոյ եւ Լեոնկլային անտիկ զղեակացն, Թուականիս Հայոց ՉԾԱ (սխալմամբ մեքենադրված է ՉԺԱ—Վ. Հ.) եւ ի Թաշաուորութեան Հայոց շեթմոյ զոր եղեր զեղրօրորդին իւր զպարոն Թորոսի, որ կոչի Լեոն, մանուկ տիօք, յաթոռն իւր եւ ինքն ի կարգ կրօնաւորութեան մտեալ, եւ խորազէտ ի մաստոլութեամբ եւ նախահոգս մեծահանճարութեամբ յանձն առեալ հոգւոյ զաշխարհս մինչև յարբ ունս հասցէ Թաշաուորն: ...» (ՄՏՄԾ, զորժ Ք 9, էջ 81-85): Նշանակում է, Լեոնը արդեն 1302 թ. Թաշաուոր է հիշվում: Մի այլ մամանակակից 1301 թվի ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գրում է. «...դարձեալ եկն տէր Աբրահամ ի մայրաքաղաքն ի Սիս, որ եղև աշխարհածոցով յամենայն յախուռն, Թաշաուորն Հայոց Հեթում, զպարոն Թորոսի զիւր եղրաւորորդին, զանրիծ պատանի զԼեոն Թաշիւ պսակեաց եւ յամսեանն յունիս յերեսուռն, յաւուր հինգշարթու...» (ՄՏՄԾ, զորժ Ք 43, էջ 362): Եթե հաստատ է հունիսի 30-ը, ապա օրը կլինի ուրբաթ, հինգշաբթին կընկնի 1301 թվի հունիսի 29-ին:

70. Հեթում Բ-ի եղբայր Ալինախի սույն բողոքի մասին այլ աղբյուրներից մեկ ոչինչ հայտնի չէ. միայն Ս. Անեցու շարունակողը գրում է, թե Ալինախը զնացել էր զանի մոտ (էջ 156), թեև բնագրից պարզ երևում է, որ այդ տեղի է ունեցել մինչև սպանությունը, այս դեպքում Ալինախը զանի մոտ բողոքի համար չի գնացել:

71. Մոնղոլների Փ. Ասիական կառավարիչ:

72. Իմա Լեոն Դ. Ըստ Սմբատի «Տարեգրքի» շարունակողի, սրան Թաշաուոր օծել են 1331 թվին (էջ 128). տես եւ հմմտ. ՆՁ, էջ 170. ՄԺ, 1, էջ 88:

73. Ք 7811 տարբերակում «գմիային» ձևով (էջ 303ա), այսինքն նավահանգստի բերդը:

74. Ալիշանի բնագրում «զպէչք նի.թան» ձևով («Հայապատում» Բ, էջ 533), իսկ սւրիշ տարբերակներում «զպէչքայաթան» (Ք 3079) կամ «ե զսութան, որ է պէչքնա», Ըստ Ալիշանի, «անծանօթ այլազգի բառ. կարծեմ, թէ վերջի մասն քինէթ՝ Թուրքարէն աղի, փականք նշանակողն է, իբր թէ փականքն եւ թալներ տարեր են» (նույն տեղ, էջ 533, ծանոթ. 2):

75. Իմա գերմանական կայսր Լուդվիգ Բավարացին, որը իշխել է 1314—1343 թթ.: